ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբեր 2023 թվականի N: 508-Ա ք.Գյումրի

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 17-ի N:1765-Ն որոշման և ՀՀ Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 27-ի «Ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատելու մասին» N:416-Ա որոշման դրույթները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կողմից դիմումների ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 1212 «Տարածքային զարգացում» ծրագրի 12030 «Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց համար առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների տրամադրում» միջոցառմամբ Շիրակի մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով քաղաքացի Վլադիմիր Բալլույանին /ժամանակավոր կեցավայր՝ ք.Գյումրի, Ինֆեկցիոն հիվանդանոց, գրանցմամբ ԼՂՀ/ հատկացնել 20000 /քսան հազար/, Կիմա Բալասանյան /ք.Գյումրի, Մանուշյան փողոց, շենք 5ա, բնակարան 6, գրանցմամբ ԼՂՀ/ հատկացնել 50000 /հիսուն հազար/, Էրիկ Պետրոսյանին /ք. Գյումրի, Տրդատ Ճարտարապետի փողոց, շենք 15, բնակարան 18, գրանցմամբ ԼՂՀ/ հատկացնել 100000 /մեկ հարյուր հազար/ և Արա Սարգսյանին /ք.Արթիկ, Ղուկասյան փողոց, տուն 33, գրանցմամբ ԼՂՀ/ հատկացնել 50000 /հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ միանվագ օգնություն:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով ապահովել վճարումը:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է